ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

— o —

ԻՆՉ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

Կարս, 6 օգոստոսի

Թվե մի անգամ «Հորիզոնի» միջոցով դիմում եղաւ ընդհանուր Ռուսաստանի հայ-կաթոլիկների կառավարիչ հայր Ս. Վ. Տէր-Սարգսեանին, որ բոլոր թեմերը հրահանգներ ուղարկէ, որպէսզի հայ կաթոլիկներն ևս պատրաստուեն ըստ պատշաճի դիմաւորելու համազգային մեծ տօնին, բայց մինչև օրս այդ դիմումը, ինչպէս երևում է, մնացել է ձայն բարբառոյ յանապատի։ Ըստ երևոյթին ոչ մի կարգադրութիւն չի եղել, գոնէ ոչ մի պատրաստութեան նշան չի երևում կաթոլիկութեան մէջ. միայն սրտի հաճոյքով կարդացինք «Հորիզոնում», որ Արդահանի կաթոլիկները, միացած լուսաւորչականութեան հետ, պատրաստուել են տօնելու տաճարի 1,500 և տպագրութեան 400 ամեակը։ Մխիթարական է, որ վերջապէս գոնէ մի փոքրիկ գիւղաքաղաքում կաթոլիկ հայերը արձագանք տուին, բայց դրանով գործը վերջացած չպէտք է համարել. հայ տաճարի և հայ տպագրութեան տօնը մի հազուագիւտ տօն է, և սրբազան պարտք կայ համայն հայութեան վրայ, առանց դաւանանքի խտրութեան, տօնելու և ցոյց տալու, որ մենք երախտագէտ ենք։ Համազգային մեծ տօնը ընդհանուր Ռուսաստանի հայ կաթոլիկների կողմից տօնել կամ չտօնելը կախուած է հոգևոր կառավարչից, և մենք նորից նրան ենք դիմում։ Աւօթ է, որ այսպիսի համազգային մի-մեծ տօնի հանդէպ հայ կաթոլիկութիւնը մեկուսացած մնայ։

Ռուբէն

ՎԵՐՋԱԳԷՍ ՏՕՆԵՑԻՆԷ

Դերբենդ, 9 օգոստոսի

Հայկական տաճարի դիւտի 1500 ամեայ և տպագրութեան 400 ամեայ յոբելեանը տօնուեց Դերբենդում ամսոյս 8 ին հասարակական ժողովարանի դահլիճում ձեռներէցութեամբ մի խումբ երիտասարդների։

Երեկոյթի գրականական և գեղարուեստական մասերի համար ընտրուած յանձնաժողովը, որը բաղկացած էր 10 հոգուց, ոչ մի ջանք չէր խնայել ծրագիրը ճոխ կազմելու։ Ինչ խօսք, որ թղթի վրայ կարելի է շարել շատ բան, բայց եկէք տեսէք, թէ ինչպէս փառաւոր կերպով նահատակեցին մեր նշանաւոր գրողների բանաստեղծութիւնները՝ Աբովեան, Պէշիքթաշլեան, Թումանեան, Իսահակեան, Նալբանդեան և Ահարոնեան խաղալիք էին դարձել մի քանի անշնորհք ընթերցողների ձեռքում։ Զանձրալի էին մանաւանդ ռեֆերատները. կարծում ենք, շարականները լսելու ոչ մի տրամադրութիւն չուներ ներկայ եղող հասարակութիւնը։ Մի բան, որ աչքի ընկաւ և չափազանց յուզիչ տպաւորութիւն թողեց, այդ Ահարոնեանի «Մայրն» էր, որ արտասանեց օրիորդ Անահիտ Տէր-Յովակիմեան։ Վատ չէր նաև օրիորդ Օհանեանի արտասանած «Գարունը» Պէշիկթաշլեանի։

Երրորդ բաժինը ներկայացում էր. խաղացին Արաքսեանի «Շփոթած ծառայ» վոդեվիլը։ Խաղի մասին այսքանը կասենք, որ եթէ հեղինակը մի ըսպէ ենթադրէր, թէ Դերբենդում այդպէս կը խաղացուի, անշուշտ իր գրուածքը կը վերնագրէր «Շփոթած դերակատարներ»։

Երեկոյթի IV բաժնի համար ծրագրուած կենդանի պատկերները չկային։

Ընդհանուր մուտք եղաւ 380 ր., ելք՝ մօտ 100 ր.։ Զուտ արդիւնքը, մօտաւորապէս 280 ր., յատկացուեց դպրոցական ֆոնդին։

Բ. Ասլեան